ՓԱՍՏԱԲԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՇՈՒՐՋ ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԸՆԹԱՑ ԱՐՑԱԽՑԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

01.07.2015 12:00

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի և ՀՀ փաստաբանական դպրոցի նախաձեռնությամբ կազմակերպվել է հեռավար դասընթաց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստաբանների համար փաստաբանի վարքագծի կանոնները թեմայով:

Դասընթացը վարել են ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը և ՀՀ փաստաբանների պալատի նախագահի միջազգային կապերի գծով խորհրդական Մարտուն Փանոսյանը:

Դասընթացին մասնակցել են Արցախի 30 փաստաբան:

Դասընթացավարները ներկայացրել են ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի փաստաբանական էթիկայի առնչությամբ ձևավորված նախադեպային պրակտիկան:

Մասնակիցները կարևորել են այս միջոցառումների շարունակականության ապահովումը:

ԼՂՀ փաստաբանների պալատի նախագահ Օլյա Ալթունյանի խոսքով ԼՂՀ փաստաբանական ինստիտուտի զարգացման գործում ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ Փաստաբանական դպրոցի դերը զգալիորեն մեծ է, որի շնորհիվ փաստաբանությամբ զբաղվել ցանկացողների քանակը Արցախում աստիճանաբար աճում է:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })